

ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

2013թ. առաջին կիսամյակում մշակույթի և սպորտի բնագավառում մարզպետարանի գործունեությունը նպատակաուղղվել է մարզում սպորտի և մշակույթի պետական քաղաքականության իրականացմանը, մշակույթի և սպորտի դերի բարձրացմանը, պետական, ազգային և այլ տոների, ազգային ծեսերի ու ծիսակատարությունների վերականգնմանն ու տարածմանը, մշակութային ժառանգության պահպանությանը, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, մշակութային կրթության զարգացմանը, սպորտի, առողջ ապրելակերպի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

Մարզի գյուղական և քաղաքային համայնքներում կազմակերպվել են բազմաթիվ ազգային, պետական տոներին նվիրված միջոցառումներ, հորեյլաններ, տարելիցներ, փառատոներ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ, համերգային և թատերական ծրագրեր, սպորտային մրցումներ, հուշամրցաշարեր, առաջնություններ և այլն:

Մարզա- մշակութային միջոցառումների իրականացման նպատակով 2013թ. նախատեսվել է **4,9385 մլն.** դրամ գումար, որից օգտագործվել է ...

Միջոցառումների իրականացմանն աջակցել են նաև դոնոր կազմակերպություններ և բարեգործներ:

Անհրաժեշտ աշխատանքներ են իրականացվել մարզի մշակույթի և սպորտի, կրթական հաստատությունների աշխատանքների կազմակերպման, մշակութային և մարզական կառույցների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման ուղղությամբ:

2013թ. ծրագրվել է անցկացնել 17 մշակութային և 12 սպորտային միջոցառումներ: Կիսամյակի ընթացքում իրականացվել են նախատեսված 7 միջոցառումները:

Այդ միջոցառումներից առավել կարևոր էին

--Երգչախմբային և վոկալ արվեստի փառատոնը, որին մասնակցեցին Եղեգնաձորի մշակույթի տան և Եղեգնաձորի երաժշտական դպրոցի երգչախմբերը:

--Մարզի շուրջ 200 երիտասարդներ մասնակցեցին միջհամայնքային մշակութային 2-րդ ցուցահանդեսին, որը տեղի ունեցավ Արմավիր, Արտաշատ և Վանաձոր քաղաքներում: Եղեգնաձոր քաղաքը ճանաչվեց <Լավագույն մշակութային քաղաք >> անվանակարգում առաջին մրցանակի: Իսկ Լիպարիտ Ասատրյանը <<Իմ չքնաղ հայրենիք>> տեսաֆիլմով հիացրեց բոլորին և արժանացավ գլխավոր մրցանակին:

---Հայ ֆրանսիական մշակութային բարեկամության շրջանակներում Եղեգնաձոր քաղաքում բարձր մակարդակով նշվեց <<Ֆրանկոֆոնիայի օրերը Եղեգնաձորում>>: Միջոցառմանը մասնակցում էին տարբեր երկրների դեսպաններ, դեսպանատան աշխատակիցներ և այլ բարձրաստիճան հյուրեր:

Քիչ չեն նաև մարզական միջոցառումները՝

<<Լավագույն մարզական ընտանիք> 2013

<<Բազե>> 2013 թվականի մարզային փուլը:

Մեր պատանի շախմատիստները մասնակցեցին դպրոցականների 7-րդ օլիմպիադային և Եղեգնաձորի ավագ դպրոցի հավաքականը գրավեց 7-րդ տեղը:

Վերջին ժամանակներս ավանդույթ է դարձել բարձր մակարդակի խմբերի համերգները մարզում: Բոլորովին վերջերս իրենց վերտուղ կատարումներով մարզում հանդես եկան Հայաստանի երիտասարդական պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ Սերգեյ Սմբատյանի գլխավորությամբ, Կոմիտասի անվան պետական քառյակը պրոֆեսոր Տեր Թադևոսյանի գլխավորությամբ և այլն: Բացի վերը նշված միջոցառումներից մարզում կազմակերպվում են տարբեր փառատոններ, մարզական մասսայական միջոցառումներ, հուշամրցաշարեր, տոնակատարություններ և այլն:

Կրթության, մշակույթի և սպորտի

վարչության պետ՝

Ա. Ղազարյան